ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 սեպտեմբերի 2022թ. N 405-Ա

ՄԱՆՎԵԼ ԾԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետի, 9-րդ և 16-րդ մասերի, հաշվի առնելով որ, 0.0064 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի քաղաքապետարանի 1998 թվականի օգոստոսի 27-ի թիվ 74 որոշումը, 1998 թվականի սեպտեմբերի 17-ի N 024748 սեփականության իրավունքի վկայականը և Մանվել Արտավազդի Ծատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի քաղաքապետարանի 1998 թվականի օգոստոսի 27-ի թիվ 74 որոշման և 1998 թվականի սեպտեմբերի 17-ի N 024748 սեփականության իրավունքի վկայականի համաձայն Մանվել Արտավազդի Ծատրյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան թիվ 26 շենքի մոտ գտնվող հասարակական նպատակային նշանակության (օգտագործման նպատակը՝ պահեստ) պահեստի պահպանման ու սպասարկման համար փաստացի օգտագործվող 0.0064 հեկտար մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասի հատկացման հիմքերը համարել վերականգնված:

2.Քանի որ, սույն որոշման 1-ին կետում նշված 0.0064 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այն հատկացվում է սեփականության իրավունքով՝ առուվաճառքի, նվիրատվության, փոխանակման, սեփականատիրոջ փոփոխության, հողամասի միավորման կամ բաժանման դեպքերում հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքի վճարման պայմանով:

3.Հաստատել սույն որոշման անբաժանելի մասը կազմող «ԳԻՍ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված հատակագիծը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

05.09.2022

X

VERIFIED OCSP 05.09.2022 11:56:34 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YEGHIAZARYAN MISHA 1305540141 Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 05
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 սեպտեմբերի 2022թ. N 406-Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի N 243-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն ու Գուշիդ Սերգեյի Զարգարյանի լիազորված անձ Միտյա Վլադիմիրովիչ Բաբախանովի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 12-ի «Անշարժ գույքը վերահասցեավորելու մասին» N 243-Ա որոշման 1-ին կետում «4-րդ փողոց 32» բառը և թվերը փոխարինել «5-րդ փողոց 31» բառով և թվերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

05.09.2022

X

VERIFIED OCSP 05.09.2022 17:53:51 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YEGHIAZARYAN MISHA 1305540141 Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 05
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 սեպտեմբերի 2022թ. N 407-Ա

ԱՆՆԱ ՋԻՐԱՔՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՈՒ ՊԱՐԻՍՊՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերի, հաշվի առնելով «ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի օգոստոսի 26-ի եզրակացությունն այն մասին, որ ինքնակամ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ կառուցված շինությունները կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինությունները կառուցված են 2020 թվականին ու հիմք ընդունելով չափագրման հատակագծերն ու Աննա Սարգսի Զիրաքյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Աննա Սարգսի Զիրաքյանին սեփականության իրավունքով պատկանող 07-051-0145-0020 կադաստրային ծածկագրով 0.05 հեկտար բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 11-րդ փողոց 13:

2. Աննա Սարգսի Զիրաքյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 11-րդ փողոց 13 հասցեի (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0145-0020, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022NRPT2N) 0.05 հեկտար մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 126.6 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը և 2.9 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

3. Աննա Սարգսի Զիրաքյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 182500 (մեկ հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր) դրամ՝ ինքնակամ շինությունների օրինականացման վճար:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում սույն որոշումն համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Revocable Signature

VERIFIED OCSP 06.09.2022 09:44:04 GMT+4

Signed by: YEGHIAZARYAN MISHA 1305540141

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 06
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 սեպտեմբերի 2022թ. N 408-Ա

«ԶԱՐՈՒՀԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱԼԵՐԻԿԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Զարուհի Վարդանյանի հայտը և վճարման անդորրագրերը՝ ***որոշում եմ.***

1.«Զարուհի Վարդանյան Վալերիկի» անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 43196019 տալ ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն Բյուրեղավան համայնքի քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 11/40 հասցեում գտնվող 63 քմ մակերեսով տարածքով առևտրի օբյեկտում՝ 2022 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recognizable Signature

X

VERIFIED OCSP 06.09.2022 15:55:16 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YEGHIAZARYAN MISHA 1305540141 Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 06
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 սեպտեմբերի 2022թ. N 409-Ա

ԳԵՈՐԳԻ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ և 9-13-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի, հաշվի առնելով «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի օգոստոսի 15-ի եզրակացությունն այն մասին, որ ինքնակամ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ կառուցված շինությունները կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինությունները կառուցված են 2003 թվականին ու հիմք ընդունելով չափագրման հատակագծերն ու Գեորգի Սեմյոնի Ծատուրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Գեորգի Սեմյոնի Ծատուրյանին սեփականության իրավունքով պատկանող 07-051-0142-0009 կադաստրային ծածկագրով, 0.04726 հեկտար, Կոտայքի մարզ գյուղ Նուռնուս 15 թաղամաս թիվ 15 հասցեի անշարժ գույքի հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 7-րդ փողոց 9:

2.Գեորգի Սեմյոնի Ծատուրյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 7-րդ փողոց 9 հասցեի (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0142-0009, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022A2QB7Y) 0.04726 հեկտար մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2003 թվականին ինքնակամ կառուցված 10.6 քմ արտաքին մակերեսով ջրավազանը, 1.8 քմ արտաքին մակերեսով զուգարանը, 2.75 քմ մակերեսով աստիճանը և 9.6 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

3.Գեորգի Սեմյոնի Ծատուրյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 28720 (քսանութ հազար յոթ հարյուր քսան) դրամ՝ ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման վճար:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում սույն որոշումն համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 06.09.2022 15:48:53 GMT+4

Signed by: YEGHIAZARYAN MISHA 1305540141

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 06
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 սեպտեմբերի 2022թ. N 410-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍ Բ-15 ՇԵՆՔ 8 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Անահիտ Միշայի Հայրապետյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Անահիտ Միշայի Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան 1-ին թաղամաս Բ-15 շենք 8 բնակարանի (վկայական N 19052022-07-0224, տրված 2022 թվականի մայիսի 19-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան 1-ին թաղամաս 12 շենք 8 բնակարան:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recognizable Signature

X

VERIFIED OCSP 06.09.2022 17:04:55 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Signed by YEGHIAZARYAN MISHA 1305540141 Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 06
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 սեպտեմբերի 2022թ. N 411-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 30 ՇԵՆՔ 19 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Գալուստ Շալիկոյի Գևորգյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Գալուստ Շալիկոյի Գևորգյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան 30 շենք 19 բնակարանի (վկայական՝ N 17042014-07-0013, տրված՝ 2014 թվականի ապրիլի 11-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 30 շենք 19 բնակարան:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Electronic Signature

X

VERIFIED OCSP 07.09.2022 12:53:29 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by YEGHIAZARYAN MISHA 1305540141 Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 07
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 սեպտեմբերի 2022թ. N 412-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի, հիմք ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն ու Սիրվարդ Անդրանիկի Խաչատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզի Նուռնուս գյուղում գտնվող անշարժ գույքի հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս 3-րդ փողոց 20:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Qualified Recoverable Signature

VERIFIED OCSP 07.09.2022 12:59:03 GMT+4

Signed by: YEGHIAZARYAN MISHA 1305540141

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 07
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2022թ. N 413-Ա

ՎԻԼԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-11-րդ, 15-րդ, 17-18-րդ և 20-րդ կետերի, հաշվի առնելով «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի հուլիսի 28-ի եզրակացությունն այն մասին, որ ինքնակամ շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ կառուցված շինությունը կառուցված չի ու չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չի քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինությունը կառուցված է 2021 թվականին (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022YRM8YW), հիմք ընդունելով չափագրման հատակագծերն ու Վիլեն Արտուշի Պետրոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Վիլեն Արտուշի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 40/25/5 հասցեի (կադաստրային ծածկագիր՝ 07-003-0020-1085, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022YRM8YW) 0.078558 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ըստ գործառնական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողամասում 2021 թվականին ինքնակամ կառուցված 164.63 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը ճանաչել օրինական:

2.Վիլեն Արտուշի Պետրոսյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 413140 (չորս հարյուր տասներեք հազար մեկ հարյուր քառասուն) դրամ՝ ինքնակամ կառուցված շինության օրինականացման վճար:

3.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

VERIFIED OCSP 08.09.2022 12:03:05 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Signed by: YEGHIAZARYAN MISHA 1305540141 Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 08
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2022թ. N 414-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 19 ՇԵՆՔԻ ԹԻՎ 35 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Արմեն Սամվելի Շաքարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Արմեն Սամվելի Շաքարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 19 շենքի թիվ 35 բնակարանի (վկայական՝ 2289798, տրված 2009 թվականի սեպտեմբերի 23-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 19 շենք 35 բնակարան:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Qualified Revocable Signature

X

VERIFIED OCSP 08.09.2022 13:08:29 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YEGHIAZARYAN MISHA 1305540141 Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 08
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2022թ. N 415-Ա

ԱՐՇԱԿ ԱԶԱԲՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի, հիմք ընդունելով Արշակ Իշխանի Ազաբյանի դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմց գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1.Արշակ Իշխանի Ազաբյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամաս 2-րդ շարք 11 (ծածկագիր՝ 07-003-0040-0007, վկայական N 18052022-07-0054) հասցեի բնակելի կառուցապատման հողամասում հողամասի ողջ պարագծով պարսպապատման և օժանդակ շինության կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի:

2.Արշակ Իշխանի Ազաբյանին՝

1)շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան.

2)շինարարական աշխատանքներն սկսել համայնքապետարանի 900105202247 հաշվեհամարին շինարարության թույլտվության համար նախատեսված 15000 (տասնհինգ հազար) դրամ տեղական տուրքը վճարելուց հետո.

3)շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 08.09.2022 16:27:40 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YEGHIAZARYAN MISHA 1305540141 Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 08
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2022թ. N 416-Ա

ԱՐԱՐԱՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի, հիմք ընդունելով Արարատ Խաչատուրի Մարտիրոսյանի դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1.Արարատ Խաչատուրի Մարտիրոսյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 27/74 (կադաստրային ծածկագիր՝ 07-003-0037-0043, սեփականության վկայական N 20072015-07-0001) հասցեի բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասում ավտոտեխսպասարկման կայանի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:

2.Արարատ Խաչատուրի Մարտիրոսյանին՝

1)շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան.

2) շինարարական աշխատանքներն սկսել համայնքապետարանի 900105202247 հաշվեհամարին շինարարության թույլտվության համար նախատեսված 15000 (տասնհինգ հազար) դրամ տեղական տուրքը վճարելուց հետո.

3)շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

VERIFIED OCSP 08.09.2022 16:51:32 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YEGHIAZARYAN MISHA 1305540141 Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 08
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2022թ. N 417-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Կառլեն Ոսկանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կառլեն Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Նուռնուսի այգետարածք թիվ 32 անշարժ գույքի (վկայական՝ 1353109, տրված՝ 2003 թվականի նոյեմբերի 03-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Միկրոբ թաղամաս 1-ին փողոց 32:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 08.09.2022 18:00:04 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Signed by: YEGHIAZARYAN MISHA 1305540141 Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 08
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 սեպտեմբերի 2022թ. N 418-Ա

ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 36-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 08-ի N 1396-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով «Երկնաքեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2022 թվականի սեպտեմբերի 06-ի N 7 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել «Երկնաքեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2022 թվականի սեպտեմբերի 12-ից մինչև 30-ը ընկած ժամանակահատվածում կատարելու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ջրաբեր գյուղի՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողերից Բյուրեղավան քաղաքի տարածքում պուրակի կառուցման համար 170 խմ հողի բերրի շերտի տեղափոխման աշխատանքներ՝ հետլիցք կատարելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Approved by Signature

VERIFIED OCSP 09.09.2022 16:13:08 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by YEGHIAZARYAN MISHA 1305540141 Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 09
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
(ՀՀ մարզ, համայնք)
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N 37 08 օգոստոսի 2022 թ.

Տրված է կառուցապատող՝ Արշակ Իշխանի Ազաբյանին (ՀՀ Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վ.Սարգսյան փողոց 36 շենք բն 28) հեռ. 099-58-75-23
(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամաս 2-րդ շարք 11 (ծածկագիր՝ 07-003-0040-0007) հասցեի բնակելի կառուցապատման հողամասում հողամասը ողջ տարածքով պարսպապատելուն օժանդակ շինություն կառուցելու, (II կատեգորիա) միջին ռիսկայնության աստիճան օբյեկտի
(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

_____ _____ շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝ (նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման և այլն) կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների _____ տեղադրման համար:
(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են « ԷՅՋԻԹԻ ՓՐՈՋԵՔԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների
(ԿԱԴ-Ա1-009, ՃԲԴ-Ա-0107 աշխատանքային նախագիծ), տնօրեն՝ Գ.Գրիգորյան ճարտարապետ՝ Ա. Խաչատրյան կոնստուկտոր՝ Մ.Ստեփանյան կողմից.
կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել է (են) փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)
–
(նշել փորձաքննության տեսակը)
_____
(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների---------- կողմից կամ
(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ _____
(նշել նախագիծը թողարկող պատասխանատու
կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների Բյուրեղավան համայնքի _____ հետ:
(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել 24 ամսվա ընթացքում՝
(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:
2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝
[] ավարտական ակտի տրամադրումից---------- ամսվա ընթացքում
[+] **ավարտական ակտի տրամադրման օրը:**

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է 10 թերթից, կարված և դրոշմակնքված է **Բյուրեղավանի համայնքապետարանի** կողմից:
(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում) _____ կողմից
(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի _____ և այլ
(նշել իրավասու մարմնի անվանումը)
շահագրգիռ մարմինների _____ հետ:
(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) *(լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում)* սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

_____

(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. *(լրացվում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում)*
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա _____ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների)
_____ քանդման՝
(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) _____ տրված սույն
(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)
թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:

Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ _____:
(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ.
Հեռ. 022265205

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
(ՀՀ մարզ, համայնք)
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N 38 08 սեպտեմբերի 2022 թ.

Տրված է կառուցապատող՝ Արարատ Խաչատուրի Մարտիրոսյանին (ՀՀ Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 27 շենք բնակարան 11) հեռ. 096 699111, 041 699111

(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 27/74 (ծածկագիր՝ 07-003-0037-0043) հասցեի բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասում ավտոտեխսպասարկման կայան կառուցելու, (II կատեգորիա) միջին ռիսկայնության աստիճան օբյեկտի

(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

_____ _____ շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝ (նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման և այլն) կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների _____ տեղադրման համար:

(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են **«ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության**

(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների

(արտոնագրեր ՃԲԴ-Ա-085, ԿԵԴ-Ա2-007, աշխատանքային նախագիծ), տնօրեն՝ Ա. Անդրեասյան, ճարտարապետ՝ Վ. Ավետիսյան, կոնստրուկտոր՝ Ա. Հովհաննիսյան կողմից.

կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել է (են) փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)

(նշել փորձաքննության տեսակը)

(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների---------- կողմից կամ

(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ **նախագծողի երաշխավորագիր N 120**

(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների **Բյուրեղավան համայնքի ղեկավարի** հետ:

(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել **24 ամսվա** ընթացքում՝

(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

[] ավարտական ակտի տրամադրումից---------- ամսվա ընթացքում

[+] **ավարտական ակտի տրամադրման օրը:**

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է 20 էջից, կարված և դրոշմակնքված է **Բյուրեղավան համայնքի ղեկավարի** կողմից:
(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում) _____ կողմից
(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի _____ և այլ
(նշել իրավասու մարմնի անվանումը)
շահագրգիռ մարմինների _____ հետ:
(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) *(լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում)* սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը
_____
(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. *(լրացվում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում)*
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա _____ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների)
_____ քանդման՝
(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) _____ տրված սույն
(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)
թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:

Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ _____:
(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ.
Հեռ. 022265205